**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<10>> հուլիսի 2026թ.    N ՄՌ/412-Ա

ք. Արմավիր

**«ԴԱԼԱՐԻԿԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԲԱՎԱԿԱՆ ՀԵԲՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Բավական Հեբոյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բավական Հեբոյանին տրամադրել 2026-2027 թվականների ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 4-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:

2. Բավական Հեբոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Թամարա Ղազարյանին:

3. «Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Թամարա Ղազարյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 4-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Բավական Հեբոյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 5-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**